

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ (ԱՄՆ) ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՎԱՐԴԻՄԻՐ ՍԱՐԳՍԻԱՆ**

Վերջին տարիներին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը զուգահեռ ակտիվացել է մասնաճյուղի համապատասխան միջազգային-իրավական որակավորում տալու վերաբերյալ համապատասխան հայեցակարգերի մշակման գործընթացը, և եթե մինչև XX դարի 90-ական թվականները գիտնականների մեծամասնությունը իրենց ուշադրությունը հիմնականում քննում էին փաստական հանգամանքների վերհանման վրա,¹ ապա ներկայումս հետազոտությունների մեջ դրան զուգահեռ շեշտադրվում է վերհանված փաստերով հիմնավորված՝ պատմական, պատմա-քաղաքական և իրավաբանական վերլուծության անհրաժեշտությունը:² Այս միտումը, մախ և առաջ, պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք պետություններ այս կամ այն մակարդակով արդեն իսկ ճանաչել են Հայոց ցեղասպանության փաստը, դատապարտել են այն,³ և տվյալ փաստը միջազգային հանրության լայն շրջանակների ու սույն ոլորտում հետազոտողների ճնշող մեծամասնության մոտ արդեն իսկ որևէ լուրջ կասկած չի հարուցում:

Վերոհիշյալ միտման դրսևորումներից մեկն է հենց հանդիսանում Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի վերլուծությունը (այսուհետ՝ Վերլուծություն կամ Հուշագիր)⁴, որն իրականացվել է Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի (այսուհետ՝ ԹՀՀՀ) 2002թ. հունիսի 12-ի «Փոխըմբռնման հուշագրի» և ԹՀՀՀ անդամների՝ 2002թ. սեպտեմբերի 9-ի «XX դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների»⁵ նկատմամբ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Ցեղասպանության մասին կոնվենցիա կամ Կոնվենցիա) կիրառելիության վերաբերյալ անաչառ և անկախ իրավաբանական վերլուծության իրականացում հայցող» դիմումի հիման վրա:⁶ Սույն վերլուծությունն իրականացվել է անկախ իրավախորհրդատուների կողմից՝ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար:

Քննության առարկա փաստաթուղթը հանդիսանում է գուտ «իրավական, այլ ոչ թե փաստագրական կամ պատ-

մական վերլուծություն».⁷ Թեպետ Հուշագրի հեղինակներն ընդգծել են, որ վերլուծություն իրականացնելիս իրենք տվյալ եզրահանգումները թխեցրել են՝ հիմնվելով այս հարցին առնչվող փաստերի վերաբերյալ գա՛նազան հաղորդումների վրա, այնուամենայնիվ չեն ձեռնարկել որևէ անկախ փաստագրական հետազոտություն:⁸ Վերլուծության միակ նպատակը, ինչպես նրանում միանշանակորեն սահմանված է, «XX դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի կիրառելիության հարցի որոշումն է»:⁹ Այլ նպատակ, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ միջազգային իրավունքի այլ նորմերի կիրառելիության հարցի քննարկում, վերլուծությունը չի հետապնդում: Մույն փաստը բխում է նրա նախարանից, ուր նշված է, որ «այն չի նպատակադրել անդրադառնալ «Իրադարձությունների» նկատմամբ միջազգային իրավունքի այլ դրույթների կամ որևէ պետության օրենքների կիրառելիության, կամ ֆիզիկական անձանց ու կազմավորումների պատասխանատվության, կամ նրանց պատասխանատվության ենթարկելու իրավունքի հետ առնչվող հարցերին»:¹⁰ Մինչև Հուշագրի բովանդակության վերլուծությանն անցնելը նպատակահարմար է ներկայացնել նրա կառուցվածքը և պարզաբանել դրանում արծարծված հիմնական հարցերը: Վերլուծությունը քաղկացած է հետևյալ բաժիններից:

Նախաբան

1. «Յեղատապանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄՄԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի հիմնական դրույթների ներկայացում և պարզաբանում.
2. Իրավական եզրահանգումների ամփոփագիր.
3. Իրավական վերլուծություն (որն ընդգրկում է հետևյալ ենթաբաժինները).

ա. Մինչև 1951թ. հունվարի 9-ը տեղի ունեցած իրադարձություններին նկատմամբ «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելման և դրա համար պատժելու» մասին ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի ոչ կիրառելի լինելը,

բ. «Դրադարձությունները» ընթերցելու համար «Յեղասպանության» տերմինի, այն իմաստով, որով այն հասկացվում է «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայում, կիրառելի լինելը:

Հուլագրի նախաբանում ներկայացվում է վերլուծության իրականացման առիթը՝ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի «Փոխըմբռնման հուլագիրը»), ուսումնասիրության առարկան և շրջանակները՝ (Յեղասպանության մասին կոմիսնեիայի կիրառելիությունը), վերլուծության բնույթը՝ (գուտ իրավական) և այլն:

Հուշագրի առաջին մասում պարզաբանվում է «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության հանցագործության բնորոշումը և հանցակազմը, շեշտվում է այն հանգամանքը, որ այդ բնորոշումը բառացիորեն արտացոլված է մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում,¹¹ մասնավորապես՝ Ռուանդայի և Նախիլին Հարավ-արավիայի համար ստեղծված միջազգային քրեական տրիբունալների,¹² ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի կանոնադրություններում:¹³

Անդրադառնալով ցեղասպանության համար պատասխանատվության հարցերին՝ Հուշագրի հեղինակները ընդգծում են ցեղասպանության հանցագործության կատարման համար ոչ միայն ֆիզիկական անձանց այլ նաև պետությունների միջազգային-իրավական պատասխանատվության փաստը՝ նշելով, որ «թեև Ցեղասպանության մասին կոնվենցիայի IV հոդվածը սահմանում է, որ ֆիզիկական անձինք են [այլ ոչ թե պետությունները – Վ. Ս.] պատասխանատվություն կրում ցեղասպանության կատարման համար, այնուամենայնիվ Կոնվենցիայի հոդված IX-ով սահմանվում է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակիցների միջև կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման կամ կատարման, ներառյալ ցեղասպանության կատարման համար պետությունների պատասխանատվության, վերաբերյալ վեճերը հանձնվում են ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:¹⁴ Հուշագրի հեղինակները ցեղասպանության համար պետությունների պատասխանատվության փաստը հիմնավորելիս՝ վկայակոչում են ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունը «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ 1996թ. գործով (Բոսնիա և Հերցեգովինան ընդդեմ Հադավսլավիայի), ուր սահմանվել է, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդված IV-ում նախատեսված դրույթը «սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարների» կամ «պաշտոնատար անձանց» պատասխանատվության վերաբերյալ չի բացառում պետության պատասխանատվության որևիցե ձև... իր մարմինների կողմից կատարված արարքների համար, և որ Կոնվենցիայի IX հոդվածում նախատեսված դրույթը պետությունների պատասխանատվության վերաբերյալ կարող է ընդգրկել պատասխանատվությունը ցեղասպանության կատարման համար՝ ներառյալ պետության պատասխանատվությունը ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժելու պարտավորությունը, այնպես ինչպես այն սահմանաված է հոդված V, VI և VII-ում, չկատարելու համար»:¹⁵

Հուշագրում այնուհետև ներկայացվում են Ցեղասպանության մասին կոնվենցիայի այլ դրույթները՝ կապված ցեղասպանության հանցագործության կանխարգելմանը և պատժելուն ուղղված ներպետական միջոցառումների իրականացման հետ (հհ. V, VI և VII), Կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից ՄԱԿ-ի մարմիններին ցեղասպանության կանխարգելման և կանխման համար դիմելու մեխանիզմի և Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման վերաբերյալ վեճերի հետ (հոդված VIII և IX):

Ցեղասպանության մասին կոնվենցիայի ելակետային դրույթները ներկայացնելուց հետո Հուշագրի հեղինակները անցնում են բուն վերլուծությանը: Հուշագրի շրջանակը փաստորեն սահմանափակվում է հետևյալ երկու հիմնական հարցերի ուսումնասիրությամբ.

1. XX դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների (Հայոց ցեղասպանության) նկատմամբ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի կիրառելիությունը.
2. Հայոց ցեղասպանության նկատմամբ ցեղասպանություն եզրույթի՝ այնպես ինչպես այն սահմանված է »Ցեղասպանության հանցագոր-

ծուխյան կանխարգելման և դրա համար պատժելու» մասին ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայում, կիրառման իրավաչափությունը:

Վերլուծելով առաջին հարցը՝ Հուլիանի հեղինակները դրան բացասական պատասխան են տալիս՝ նշելով, որ միջազգային իրավունքը, որպես կանոն, արգելում է պայմանագրերին հետադարձ ուժը տալը, «եթե պայմանագրից այլ մտադրություն չի հետևում կամ այլ կերպ չի հաստատված»:¹⁶

Այդ եզրահանգման համար հիմք են ընդունվել «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969թ. կոնվենցիայի դրույթները: Թեև Հուլիանի հեղինակները նշում են, որ Վիեննայի 1969թ. կոնվենցիան ևս մինչև 1980թ. հունվարի 27-ն ուժի մեջ մտած չի եղել, այնուհանդերձ ընդգծում են, որ քանզի այն ամրագրում է միջազգային իրավունքի պրոգրեսիվ զարգացումը և նրա կողմնակցական, ուստի դեռևս նրա ստեղծումից առաջ նրանում պարունակվող դրույթների մեծամասնությունը հանդիսացել են սովորության միջազգային իրավունքի արտացոլում: Վերը նշվածը Հուլիանի հեղինակները հիմնավորում են նաև միջազգային դատական պրակտիկայով, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի փորձով, որը մի շարք գործեր քննելիս ընդգծել է 1969թ. Վիեննայի կոնվենցիայի որոշ դրույթների սովորության միջազգային իրավունքի մաս կազմելը՝ այդ թվում և պայմանագրերի հետադարձ ուժն արգելելու մասին: Ինչպես նշվում է Հուլիանում, Կոնվենցիայի նախապատրաստման ողջ գործընթացը և դրա դրույթների ճնշող մեծամասնությունն ուղղակի վկայում են այն մասին, որ Կոնվենցիան ստեղծողները ապագային ուղղված (ակտիվ) այլ ոչ քե հետադարձ ուժ ունեցող (ոետրո-սպեկտիվ) պարտավորություններ են դնում այն պետությունների վրա, որոնց նրանք ներկայացնում են՝ ներառելով «հանցագործությունների հետագա կանխարգելումը»:¹⁸

Բացի այդ Հուլիանում շեշտվում է այն հանգամանքը, որ Կոնվենցիայի մասնակից երկրների վրա պարտավորություններ դնող դրույթների տեքստային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք գրեթե ամբողջությամբ պարտավորեցնում են մասնակից պետություններին գործողություններ ձեռնարկել ապագայում: Օրինակ՝ մասնակից պետությունները «պարտավորվում են» կանխարգելել և պատժել ցեղասպանության հանցագործությունը,¹⁹ «պարտավորվում են գործողության մեջ դնել» Կոնվենցիայի դրույթներն իրագործելու համար անհրաժեշտ օրենսդրությունը և համաձայնվում են, որ ցեղասպանության մեջ մեղադրվող անձինք «պետք է դատվեն» «իրավասու [ներպետական – Վ. Ս] կամ միջազգային քրեական դատարանների կողմից» (Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդ. VI):

Վերլուծության հեղինակները, հիմնվելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969թ. կոնվենցիայի և միջազգային դատական պրակտիկայի վրա, սահմանել են նախ և առաջ, որ.

1. Ցեղասպանության մասին կոնվենցիան, հանդիսանալով միջազգային-իրավական պայմանագիր, ուժի մեջ է մտնում «այն կարգով և ժամկետներում, որոնք նախատեսված են դրա մեջ կամ համաձայնեցված են բանակցող պետությունների կողմից»:²⁰
2. Միջազգային իրավունքը, որպես կանոն, արգելում է պայմանագրերին հետադարձ ուժ տալը:

Այնուհետև, հիշատակելով Յեղասպանության մասին կոնվենցիայի հոդված XIII-ը, Հուշագրի հեղինակները արձանագրել են այն փաստը, որ Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին, այսինքն՝ Կոնվենցիայի վավերացման կամ միանալու մասին 20-րդ փաստաթուղթը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվան հաջորդող 90-րդ օրը:

Ի մի բերելով բոլոր վերը նշված փաստարկները՝ Հուշագրի հեղինակները հանգում են այն եզրակացության, որ Յեղասպանության մասին կոնվենցիան չի առաջացնում ֆիզիկական անձանց քրեական կամ պետությունների [միջազգային] պատասխանատվություն այն իրադարձությունների համար, որոնք տեղի են ունեցել XX դարի սկզբին կամ ցանկացած այլ ժամանակ մինչև 1951թ. հունվարի 12-ը:²¹

Մակայն վերոհիշյալ փաստի ամրագրումով Վերլուծության հեղինակները չեն սահմանափակվում, նշելով, որ «թեև նրանց խնդրել են տալ եզրակացություն այն հարցի վերաբերյալ, թե կիրառելի է, արդյո՞ք, Յեղասպանության մասին կոնվենցիան «Իրադարձությունների» նկատմամբ, և հետազոտության շրջանակներից դուրս է այն հարցի պարզաբանումը, թե Կոնվենցիան կողմնակցում է գոյություն ունեցող միջազգային իրավունքը (ցեղասպանական ակտերի կատարման համար), ինչպես նաև այն հարցի պարզաբանումը, թե իրադարձությունների կատարման ժամանակ այն [ցեղասպանությունը – Վ. Մ.] հանդիսացել է միջազգային հանցագործություն՝ առաջացնելով պետությունների և ֆիզիկական անձանց պատասխանատվությունը միջազգային սովորության իրավունքի ուժով, այնուամենայնիվ Իրադարձությունների նկատմամբ Յեղասպանության մասին կոնվենցիայի կիրառելիությունը որոշելու խնդրանքը ներառում է նաև այն հարցի պարզաբանումը, թե՞ «ցեղասպանություն» տերմինը՝ ինչպես այն սահմանվում է Կոնվենցիայում, կարող է պատշաճորեն կիրառվել:

ա. ընդհանրապես բնորոշելու համար XX դարի սկզբին տեղի ունեցած Իրադարձությունները և

բ. բնութագրել այդ Իրադարձությունները [Հայոց ցեղասպանությունը – Վ. Մ.]²²

Բացելով փակագծերը՝ Հուշագրի հեղինակները նշում են, որ տերմինաբանորեն ցեղասպանություն հասկացությունը կիրառելի է XX դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Կոնվենցիայի տեքստից և այլ հարակից փաստաթղթերից (օրինակ՝ ՄԱԿ-ի ԳԱ թիվ 95/1 և 96/1 բանաձևերը)²³ պարզ է դառնում, որ ցեղասպանություն տերմինը կարող է կիրառելի լինել Կոնվենցիայի ստեղծումից առաջ տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ:²⁴ Որպես վերը նշվածի ապացույց Հուշագրի հեղինակները հղում են կատարում նաև Կոնվենցիայի նախաբանի վրա, ուր, մասնավորապես, նշված է, «որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը»:

Յեղասպանության հանցագործության հանցակազմի տարրերը հետազոտելիս՝ Հուշագրի հեղինակները կողմնորոշվելու համար հիմք են ընդունել Միջազգային քրեական դատարանի նախապատրաստական հանձնաժողովի մշակած չորս անհրաժեշտ տարրերի ցանկը, որոնց առկայության դեպքում հնարավոր է ապացուցել ցեղասպանություն հանցագործության հանցակազմի՝ ինչպես այն սահմանված է ՄՔԳ-ի Կանոնադրության 6-րդ հոդվածում, առկայությունը կամ բացակայությունը: Ըստ

այդ ցանկի «սպանության միջոցով ցեղասպանության» հանցագործության հանցակազմը ընդգրկում է հետևյալ տարրերը.²⁵

1. Հանցագործը սպանել է (կամ մահ է պատճառել) մեկ կամ ավելի անձանց.
2. Այդ անձը կամ անձինք պատկանել են որոշակի ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի.
3. Ոճրագործը մտադրություն է ունեցել ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնել ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբը, որպես այդպիսին.
4. Արարքը տեղի է ունեցել այդ խմբի դեմ ուղղված նմանատիպ ակնհայտ արարքների համատեքստում կամ արարք էր, որն ինքնին կարող էր նման ոչնչացման պատճառ դառնալ.²⁶

Հենվելով մատնանշված տարրերի վրա, ինչպես նաև, որպես փաստական հիմք ընդունելով «Ժրադարձությունների ժամանակահատվածի մասնովի հաղորդագրությունները, Օտմանյան և արտասահմանյան պաշտոնյաների ու հայ վեհասպարդների հուշերը, դատական որոշումները, նամակագրությունը և պետական արխիվներում պահպանվող այլ փաստաթղթերը և հանրաճանաչ պատմաբանների աշխատությունները» սկսած Արևոյ թույնմբից»²⁷ Հուշագրի հեղինակները հանգել են այն եզրակացության, որ ցեղասպանության հանցագործության հանցակազմի վերոհիշյալ 4 տարրերից առնվազն 3-ն առկա են «Ժրադարձություններում»: Այսպես.

1. Մեկ կամ ավելի անձինք սպանվել են (նրանց մահ է պատճառվել),
2. Այդ անձինք պատկանել են որոշակի ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբին և վերջապես
3. Այդ արարքը տեղի է ունեցել նշված խմբի դեմ ուղղված նմանատիպ ակնհայտ արարքների համատեքստում.²⁸

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ցեղասպանության հանցագործության հանցակազմում՝ ընդհանրապես, և Հայոց ցեղասպանության պարագայում՝ մասնավորապես, «մտադրության» տարրի խնդիրը բավականաչափ քարդ է վիճելի է՝ Հուշագրի հեղինակները առանձին հետազոտության են ենթարկել «Ժրադարձություններում» ցեղասպանության մտադրության (*dolus specialis*), այն է՝ հանցակազմի 4-րդ տարրի, առկայության հարցը՝ նշելով, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայով նախատեսված հանցակազմում ամրագրված «մտադրությունը»²⁹ առանձնացնում է նրան այլ միջազգային հանցագործություններից.³⁰

Ամփոփելով Ռուանդայի և Նախկին Հարավսլավիայի համար ստեղծված միջազգային տրիբունալների պրակտիկան և «մտադրության» հարցում գոյություն ունեցող հիմնական տեսակետները՝ Հուշագրի հեղինակները հանգել են այն եզրակացության, որ «ցեղասպանության մտադրության կարևորագույն խնդիրը, վիճելի է, և սույն իրավաբանական վերլուծությունը չի նպատակադրում վերջնականորեն լուծել որոշակի փաստական վեճեր»: Այնուամենայնիվ վերլուծության հեղինակները հավաստում են, որ «Ժրադարձություններին վերաբերվող բազմաթիվ փաստերից բխող առավել հիմնավորված եզրահանգումն այն է, որ չնայած «ճշմարտախոհ թուրքերի»՝ հայերի օգտին բազմաթիվ միջամտությունների իրագործողներից ոմանք գիտակցում էին, որ նրանց գործողությունների հետևանքը կարող էր լինել Արևելյան Անատոլիայի հայերի, որպես այդպիսին, մասամբ կամ ամբողջովին ոչնչացնելը, կամ գործում էին այդ նպա-

տակին հասնելու համար, և այդ իսկ պատճառով «իրադարձություններին» բնորոշ է անհրաժեշտ ցեղասպանական մտադրությունը: Եվ քանի որ վերը նշված բոլոր մնացած երեք տարրերը հստակորեն ապացուցվել են, իրադարձություններն, ամբողջովին վերցրած, կարելի է ասել, ընդգրկում են Ցեղասպանության մասին կոնվենցիայում մախատեսված ցեղասպանության հանցագործության հանցակազմի բոլոր տարրերը, և իրավագետները, ինչպես նաև պատմաբանները, քաղաքական գործիչները, լրագրողները և այլ անձինք կարողաքանցվեն՝ շարունակելով այդպես բնորոշել դրանք»:³¹

Վերոհիշյալ փաստաթղթի բազմակողմանի վերլուծությունը թույլ չի տալիս նրան մեկ միասնական դրական կամ բացասական գնահատական տալ: Այն ավելի քան հակասական է և ավելի մեծ թվով հարցեր է առաջացնում, քան պատասխաններ է տալիս: Հուշագիրը երկակի բնույթ է կրում. դժվար է մույնիսկ պատկերացնել, թե ի՞նչ հետագա արձագանք այն կարող է ունենալ կամ ի՞նչ իրավական հետևանքներ կարող է առաջացնել, այնուամենայնիվ, գերծ մնալով վերջնական գնահատական տալուց, փորձենք վերլուծել նրա հիմնական դրական և բացասական կողմերը:

Մեր կարծիքով, փաստաթղթի հիմնական բացասական կողմը հետևանք է ԹՀՀՀ հայկական կողմի անդամների կողմից թույլ տրված հայեցակարգային սխալի: Հայկական կողմն Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին ներկայացված «Փոխըմբռնման հուշագրում» հայցել է պարզել, թե «կիրառելի է, արդյ՞ոք, XX դարի սկզբին տեղի ունեցած Իրադարձությունների նկատմամբ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու» մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան: Հուշագրի հեղինակները, տառացիորեն մեկնաբանելով կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ նման խնդրանքը, հանգել են այն եզրակացության, որ տվյալ հարցով ուսումնասիրությունը սահմանափակվում է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի՝ որպես մեկ միասնական փաստաթղթի, այլ ոչ թե նրա առանձին դրույթների կիրառելիության հարցի որոշմամբ:

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիան բազմակողմ, ունի-վերսալ միջազգային-իրավական պայմանագիր է՝, և նրա վրա տարածվում են միջազգային պայմանագրերի իրավունքի վերաբերյալ նորմերը և սկզբունքները, մասնավորապես՝ պայմանագրերի ուժի մեջ մտնելու, հետադարձ ուժի արգելման, մեկնաբանման ընդհանուր դրույթների վերաբերյալ: Այս տեսանկյունից Կոնվենցիան՝ որպես միջազգային պայմանագիր, միջազգային-իրավական պարտավորություններ է դնում միայն այն վավերացրած կամ նրան միացած պետությունների վրա, այն էլ՝ նրանց համար տվյալ փաստաթուղթ պարտադիր դառնալուց հետո: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ *Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիան* չի պարունակում պատասխան այն հարցին, թե՞ որևէ պայմանագրի կիրառելիություն ասելով՝ մենք հասկանում ենք այն ամբողջությամբ, թե՞ նրա առանձին դրույթների կիրառելիություն՝ նշելով միայն հոդված 31-ի 2-րդ մասում (մեկնաբանման ընդհանուր կանոններ), որ «մեկնաբանման նպատակների համար համատեքստը ընդգրկում է [առնվազն – Վ. Մ.] նրա տեքստը, ներառյալ նախաբանը և հավելվածները», ինչից կարելի է եզրակացնել, որ Կոնվենցիայի կիրառելի-

ություն ասելով՝ հասկանում ենք այն, որպես մեկ փաստաթուղթ դիտելը: Այս պնդումը հիմնավորվում է մեկ միջազգային դատական պրակտիկա-
յով, մասնավորապես՝ Ամբաստանի գործով (Հունաստանը ընդդեմ Միաց-
յալ Թագավորության) ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատա-
րանը սահմանել է, որ «*Պայմանագիրը, այսինքն՝ պայմանագրի բոլոր կե-
տերը, ուժի մեջ կմտնի փախչողներից ամմիջապես հետո*»³³ Ուստի Հայոց
ցեղասպանության նկատմամբ «Ցեղասպանության հանցագործության
կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի կիրառե-
լիություն ասելով՝ հասկանում ենք այն ամբողջովին՝ որպես միասնական
փաստաթուղթ, այլ ոչ թե մի առանձին դրույթների կիրառելիությունը: Այդ
տեսանկյունից Հուլիանի հեղինակները հանգել են այն եզրակացությանը,
որ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար
պատժելու մասին» կոնվենցիան՝ դրա հոդված XIII-ի համաձայն, ուժի մեջ
է մտել 1951թ. հունվարի 12-ին, ուստի՝ որպես միջազգային պայմանագիր,
կիրառելի է մինչև տվյալ ժամկետը տեղի ունեցած որևէ իրադարձության
նկատմամբ, որը պարունակում է ցեղասպանության հանցագործության
հանցակազմի բոլոր տարրերը՝ ներառյալ Հայոց ցեղասպանությունը: Այս
տեսանկյունից փաստաթղթի հեղինակները չէին կարող հանգել այլ եզրա-
հանգման, քան այն՝ համաձայն որի, Ցեղասպանության մասին կոնվեն-
ցիան Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի է, քանի որ այն տե-
ղի է ունեցել 1951թ. հունվարի 12-ից առաջ, այսինքն՝ մինչև կոնվենցիայի
ուժի մեջ մտնելը: Նշենք, ի դեպ, որ մույն պատճառաբանությամբ Կոնվեն-
ցիան չի կարող կիրառելի լինել մեկ Հրեական հոլոքոստի նկատմամբ, որը
ևս տեղի է ունեցել մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

Մակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ ոչ մի լուրջ
իրավաբանական հետազոտության մեջ ոչ մի իրավաբան-միջազգայնա-
գետ, թե ազգությամբ հայ, թե օտարերկրացի չի գտնում, որ «Ցեղասպանու-
թյան հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մա-
սին» ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիան՝ որպես միջազգային-
իրավական պայմանագիր, կարող է կիրառելի լինել Հայոց ցեղասպանու-
թյան նկատմամբ: Հետազոտողների ճնշող մեծամասնությունը պաշտպա-
նում են այն տեսակետը, համաձայն որի Կոնվենցիայի որոշ դրույթներն են
միայն՝ որպես սովորության միջազգային-իրավական նորմեր, կիրառելի
Հայոց ցեղասպանության նկատմամբ:³⁴

Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության նկատմամբ Կոնվենցիա-
յի կիրառելիությունը միայն հետադարձ ուժ կհաղորդեր, ինչը ընդհանուր
առմամբ քաջավոր է միջազգային իրավունքում և հենց Կոնվենցիայի
դրույթներով: Իրավաբանական գրականության մեջ կան տարբեր տեսա-
կետներ Հայոց ցեղասպանության նկատմամբ Ցեղասպանության մասին
կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ: Մույն տեսակետերից միայն
մեկի համաձայն Կոնվենցիան՝ որպես միջազգային պայմանագիր, կիրա-
ռելի է Հայոց ցեղասպանության նկատմամբ: Այդ տեսակետի կողմնակից-
ները դիտում են Հայոց ցեղասպանությունը՝ որպես շարունակվող հանցա-
գործություն՝ նշելով, որ «Ցեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի
է 1915թ. Հայոց ցեղասպանության նկատմամբ, քանի որ թուրքական իշ-
խանությունների կողմից կազմակերպված ցեղասպանությունը դեռևս շա-
րունակվում է մեր օրերում, քանի որ ժամանակակից Թուրքիայի ներսում
ընակվող հայերը կորցրել են կամ հետզհետե շարունակում են կորցնել

իրենց ինքնությունը: Նմանապես Հայաստանից դուրս բնակվող հայերը ժամանակի ընթացքում կենթարկվեն իրենց մշակութային ինքնությունը կորցնելու ընդհանուր միտմանը: Յուրաքանչյուր անգամ, երբ որևէ հայ կորցնում է իր ինքնությունը 1915թ. ծրագրավորված և սկսված ցեղասպանությունը շարունակում է տալ իր պտուղները: Հայաստանից դուրս ապրող հայերը չեն լքել իրենց հողերը իրենց ազատ կամքով, և քանի որ Յեղասպանության մասին կոնվենցիայի գլխավոր նպատակներից մեկն է հանդիսանում կանխարգելել ազգի բռնի բնաջնջումը, ուստի հայ ազգի հետևողական ունչացումը, որն սկսվել է 1915թ., բայց շարունակվում է առ այսօր հանդիսանում է Յեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների խախտում»³⁵ Բայց այս տեսակետի կողմնակիցները ևս Յեղասպանության մասին կոնվենցիային հետադարձ ուժ տալու պահանջ չեն ներկայացնում: Նրանք պարզապես գտնում են, որ Կոնվենցիայի ստորագրման և ուժի մեջ մտնելու պահին Հայոց ցեղասպանությունը դեռևս շարունակվում էր (և շարունակվում է առ այսօր), և որ ուժի մեջ մտնելու պահից կոնվենցիան կարող էր կիրառվել Հայոց ցեղասպանության նկատմամբ:

Հայոց ցեղասպանության նկատմամբ Յեղասպանության մասին կոնվենցիայի կիրառման վերաբերյալ գերակայող տեսակետը, որը կիսում են հետազոտողների մեծամասնությունը կայանում է նրանում, որ Յեղասպանության մասին կոնվենցիայի միայն որոշ հիմնական դրույթներ՝ որպես սովորության միջազգային-իրավական նորմեր, այսինքն՝ որպես «համընդհանուր պրակտիկայի ապացույց»,³⁶ կիրառելի են Հայոց ցեղասպանության նկատմամբ: Դրանք են, մասնավորապես՝ ցեղասպանության հանցագործության հանցակազմին վերաբերվող դրույթները (Կոնվենցիայի հոդ. II), ցեղասպանության հանցագործության կատարման համար պատասխանատվության սկզբունքներին վերաբերվող դրույթները (հհ. IV, VII),³⁷ ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրության, ցեղասպանություն կատարելու փորձի, ուղղակի և հրապարակային հրահրման և այլի վերաբերյալ դրույթները (հոդ. III) և այլն: Հենց այս տեսակետին են, փաստորեն, հետևել Վերլուծության հեղինակները՝ նախ սահմանելով, որ Յեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի չէ Հայոց ցեղասպանության նկատմամբ, իսկ այնուհետև ընդգծելով այն, որ XX դարի սկզբին տեղի ունեցած Իրադարձությունները պարունակում են Յեղասպանության մասին կոնվենցիայում նախատեսված հանցակազմի անհրաժեշտ տարրերը:

Այդ իսկ պատճառով Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին ներկայացված հարցադրման մամօրինակ ձևակերպումը մեր կարծիքով, հանդիսանում է հայեցակարգային սխալ, ինչը և հանգեցրել է այդ կարգի եզրահանգմանը: Այս հայեցակարգային սխալի հետևանքով փաստաթղթի հեղինակները փաստորեն հնարավորություն չեն ունեցել պատասխանել մի շատ կարևոր հարցի, այն է՝ թե կարելի է, արդյո՞ք, Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառել Յեղասպանության մասին կոնվենցիայի որոշ դրույթներ՝ որպես սովորության միջազգային իրավունքի արտացոլում՝ արդարացիորեն գտնելով, որ այդ հարցը նշված հետազոտության շրջանակից դուրս է: Եթե ներկայացվող հարցը ձևակերպվեր այլ կերպ, մասնավորապես՝ «Կիրառելի են, արդյո՞ք, Յեղասպանության մասին կոնվենցիայի որոշ դրույթներ՝ որպես սովորության միջազգային-իրավական նորմեր, XX դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ», ապա և ուսումնասիրության շրջանակը, և պա-

բոլոր անհրաժեշտ տարրերի ամկայության վերաբերյալ: Այսպես, համադրելով ՄԶԴ-ի կողմից առաջ քաշված ցեղասպանության հանցագործության հանցակազմի տարրերը Հայոց ցեղասպանության փաստի հետ, Հուլիսի 4-րդ հոդվածի հետևանքով հստակորեն սահմանում են, որ անհրաժեշտ 4 տարրից առկա են 3-ը, և վեճ է առաջացնում միայն 4-րդ, այն է՝ ցեղասպանության «մտադրության» (*dolus specialis*) տարրի ամկայության վերաբերյալ: Թեպետ վերլուծության հեղինակները, վերջ ի վերջո, հանգում են այն եզրակացության, որ ցեղասպանության մտադրությունը (*dolus specialis*) առկա է Հայոց ցեղասպանության պարագայում, սակայն վերջինիս ամկայությունն ապացուցելուց նրանք չեն կատարում առանձին վերլուծություն, այլ քիսեցնում են այն նախկին երեքից՝ նշելով, որ քանզի «վերջ սահմանված մյուս երեք տարրերը հստակորեն հաստատված են, Իրադարձությունները, հավաքականորեն դիտարկված, պարունակում են ցեղասպանության հանցագործության»՝ ինչպես այն սահմանված է Կոնվենցիայում, բոլոր տարրերը, եւ իրավագետները, պատմաբանները, քաղաքական գործիչները, լրագրողները եւ այլ անձինք արդարացված կլինեն՝ շարունակելով այդպես որակել դրանք»:⁴⁰ Չարմանալի է, թե ինչպես այսպիսի լուրջ հետազոտություն իրականացրած անձինք ուշադրություն չեն դարձրել այն պարզ հանգամանքի վրա, որ հանցագործության յուրաքանչյուր տարրի ամկայությունը պետք է ապացուցվի առանձին վերցված, այլ ոչ թե քիսեցվի մեկը մյուսից:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ վերլուծության հեղինակները, խոսելով մինչև Ցեղասպանության մասին կոնվենցիայի ստեղծումը տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ ցեղասպանություն եզրույթի կիրառելիության մասին, ի նկատի ունեն ոչ թե նրա իրավաբանական այլ տերմինաբանական կիրառելիությունը:

Վերլուծության թերությունների շարքին, մեր կարծիքով, պետք է դասել նաև այն, որ եզրահանգումների համար հիմք են ընդունվել հիմնականում XX դարի վերջին ստեղծված Միջազգային *ad hoc* տրիբունալների պրակտիկան և գրեթե ամբողջությամբ անտեսվել է Նյուրնբերգյան դատավարության փորձը: Նյուրնբերգյան դատավարությունը ժամանակային առումով շատ ավելի մոտ է կանգնած Հայոց ցեղասպանությանը, քան Նախկին Հարավսլավիայի և Ռուսնդայի համար ստեղծված տրիբունալների շրջանակներում տեղի ունեցած դատավարությունները: Ընդհանրապես Վերլուծությունը միայն երկու անգամ է հիշատակում Նյուրնբերգ բառը, իսկ Նյուրնբերգի Միջազգային քրեական տրիբունալի կանոնադրության, դատավճիռների, ինչպես նաև Նյուրնբերգյան տրիբունալի սկզբունքների մասին (ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 95/1 բանաձև) ընդհանրապես որևէ հիշատակում չի պարունակում:

Վերջնական գնահատական չտալով սույն վերլուծությանը՝ մենք ստիպված ենք արձանագրել, որ վերջին ժամանակահատվածում երևան եկած միջազգային-իրավական փաստաթղթերը Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի վերաբերյալ աչքի են ընկնում հակասականությամբ և երկակիությամբ, ինչի վառ օրինակ է հանդիսանում Եվրոպական Խորհրդարանի 1987 թվականի հունիսի 17-ի «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը,⁴¹ որում մի կողմից սահմանվում է, որ «Ողբերգական իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն»՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից

1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոմվենցիայի, իսկ մյուս կողմից նշվում է, որ «Ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողորդության համար», և որ «այստեմական այդ իրադարձությունների ճանաչումը, որպես ցեղասպանություն, առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրա-վական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»:⁴²

Փաստորեն, վերը նշված բանաձևում որդեգրված «և մեխին, և պայ-տին հարվածելու» քաղաքականությունը, որն, ըստ երևույթին, հանդիսա-նում է հարցի կոմպրոմիսային լուծման փորձ, իր տրամաբանական շարու-նակությունն է ստացել նաև սույն Հուլագրում: Վերլուծությունը, նախ ամ-րագրելով «Իրադարձությունների» նկատմամբ 1948 թվականի Կոմվենցի-այի ոչ կիրառելի լինելու հանգամանքը, այնուհետև բնորոշում է այդ Իրա-դարձությունները՝ որպես ցեղասպանության հանցագործության հանցա-կազմին համապատասխանող: Մեր կարծիքով, այս կարգի կոմպրոմիսա-յին լուծումները հղի են շատ լուրջ հետևանքներով, քանի որ կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ Թուրքիայի Հանրապետությունը, ընդունե-լով Հայոց ցեղասպանության փաստը, միաժամանակ կհայտարարի, որ Թուրքիան միջազգային-իրավական պատասխանատվություն չի կարող կրել այն իրադրությունից համար, քանզի այդ ժամանակահատվածում ցեղա-սպանությունը չի հանդիսացել միջազգային իրավունքով արգելված ա-րարք:

Ընդհանուր առմամբ բացասական գնահատական տալով քննու-թյան առարկա վերլուծությանը՝ չենք կարող անտեսել նրանում արժարժ-ված մի շարք դրական երևույթներ, որոնք կարող են, որոշակի առումով, պարզեցնել Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի Հանրապետու-թյանը պատասխանատվության ենթարկելու գործընթացը, ինչպես նաև քննարկվող ոլորտում իրավաբանական հետազոտություններ իրականաց-նողների աշխատանքը:

Որո՞նք են դրանք: Նախ և առաջ դրական կողմերի շարքին պետք է դասել այն, որ Վերլուծության հեղինակները ևս մեկ անգամ ընդգծում են Յեղասպանության մասին կոմվենցիայի մի շարք դրույթների սովորութա-յին-իրավական բնույթը՝ հիշատակելով ՄԱԿ-ի Արդարադատության մի-ջազգային դատարանի պրակտիկան, մասնավորապես՝ 1951 թվականի խորհրդատվական եզրակացությունը «1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոմվենցիայի նկատմամբ վերապահումների իրավա-չափության վերաբերյալ», որում ամրագրվել է, որ առնվազն Կոմվենցիայի ընդունումից հետո «*Կոմվենցիայի հիմքում ընկած սկզբունքները, ճանաչ-վել են քաղաքակիրթ պետությունների կողմից՝ որպես պարտադիր, մույն-իսկ առանց որևէ կոմվենցիոնալ ամրագրման*»,⁴³ ինչպես նաև ««Յեղա-սպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժե-լու մասին» կոմվենցիայի կիրառելիության վերաբերյալ 1996թ. գործով (Բոսնիա և Հերցեգովինա ընդդեմ Հարավսլավիայի) արված եզրակացու-թյունը, որում Դատարանը հաստատել է, որ «Յեղասպանության մասին կոմվենցիայով ամրագրված իրավունքները եւ պարտականությունները հանդիսանում են *erga omnes* իրավունքներ եւ պարտականություններ»»:⁴⁴

Սույնով, փաստորեն, վերլուծությունը ընդգծում է, որ ոչ միայն իրա-

վարանական գրականության մեջ այլ նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայում ցեղասպանության հանցագործությունը դիտարկվում է՝ որպես միջազգային սովորութա-իրավական արգելք, միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերի (jus cogens) խախտում: Կոնվենցիայում ամրագրված դրույթների սովորութային բնույթը շեշտելու համար Հուլիանյան հեղինակները վկայակոչում են նաև Ցեղասպանության մասին կոնվենցիայի նախապատրաստման ժամանակ (travaux preparatoires) որոշ պետությունների ներկայացուցիչների արված հայտարարությունները, մասնավորապես՝ Լուրայի պատվիրակի հայտարարությունը, ըստ որի *«պատմությունը բացահայտել է ցեղասպանության անհամար օրինակներ...»*,⁴⁵ Մեծ Բրիտանիայի պատվիրակ և Նյուրնբերգի դատարանում բրիտանական գլխավոր մեղադրող՝ Հարթի Շոուքրոսի հայտարարությունը, որում ցեղասպանությունը սահմանվել է՝ որպես *«միջազգային իրավունքում արդեն հայտնի հանցագործության, որի օրինակներ պատմությունը տվել է դարերի ընթացքում»*⁴⁶ և վերջապես Արգենտինայի պատվիրակի հայտարարությունը, որը սահմանել է ցեղասպանությունը՝ որպես *«հանցագործության, որը թեև միշտ գոյություն է ունեցել, բայց միայն վերջերս է սահմանվել»*։⁴⁷

Սույն փաստաթղթի դրական կողմերի շարքում կցանկանայինք հիշատակել նաև այն, որ, ի վերջո, մի փաստաթղթում ամրագրվեց ցեղասպանության կատարման համար պետության պատասխանատվության հնարավորությունը և որոշակի առումով վերջ դրվեց միջազգային-իրավական գրականության մեջ տեղ գտած այն թյուրըմբռմանը, համաձայն որի Ցեղասպանության մասին կոնվենցիան նախատեսում է բացառապես ֆիզիկական անձանց քրեակիրական պատասխանատվությունը ցեղասպանության իրագործման համար: Եվ իհարկե, Ցեղասպանության մասին կոնվենցիայում ուղղակիորեն ամրագրված չէ պետությունների պատասխանատվության մասին նորմը, այնուամենայնիվ Հուլիանյան հեղինակները, հիմնվելով ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի պրակտիկայի վրա,⁴⁸ հանգել են այն եզրակացության, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայի IX հոդվածը, փաստորեն, անուղղակի կերպով սահմանում է ցեղասպանության իրագործման համար պետությունների միջազգային-իրավական պատասխանատվության հնարավորությունը:

Ցեղասպանության հանցագործության իրագործման համար պետության պատասխանատվության հարցի շեշտումը հատկապես կարևորվում է Հայոց ցեղասպանության պարագայում՝ հաշվի առնելով, այն հանգամանքը, որ առկա իրավիճակում դրա իրագործման համար պատասխանատվության այլ ձևերի հարց բարձրացնելը, մասնավորապես՝ ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության, պրակտիկորեն հնարավոր չէ: Այս փաստի արձանագրումը էապես հեշտացնում է Հայոց ցեղասպանության ոլորտում իրավաբանական հետազոտություններ իրականացնողների աշխատանքը այն պատճառով, որ պետության պատասխանատվության փաստը ցեղասպանության իրագործման համար համարվում է հաստատված և կարիք չի առաջանում առանձին անդրադարձալ դրա ապացուցմանը:

Ամփոփելով վերը նշվածը՝ պետք է արձանագրել, որ Վերլուծությունը՝ իր դրական կողմերով հանդերձ, Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացին նոր դրական լիցք հաղորդել չի կարող: Ըստ էության ակնհայտ էր, որ Ցեղասպանության մասին կոնվենցիան՝

որպես պայմանագիր, չէր կարող կիրառելի լինել մինչև նրա ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների՝ այդ թվում նաև Հայոց ցեղասպանության, նկատմամբ: Այս տեսանկյունից վերլուծության հեղինակների մեկնությունն ավատասխանը Հայոց ցեղասպանության նկատմամբ Յեղասպանության մասին կոմպենցիայի կիրառելիության վերաբերյալ ավելի քան ակնհայտ էր և ավելի քան սպասելի: Մեր կարծիքով, քննության առարկա վերլուծությունը հայկական կողմի հաղթանակ դիտելը ամփոփում է, քանի որ, փաստորեն, **ՅՀՀՀ «Փոխըմբռնման հուշագրում»** ներկայացված է հիմնական հարցադրմանը, այն է՝ կիրառելի՞ է, արդյոք, Յեղասպանության մասին կոմպենցիան Հայոց ցեղասպանության նկատմամբ, բացասական պատասխան է տրված, իսկ Հայոց ցեղասպանության մեջ հանցակազմի առկայության վերաբերյալ՝ Հուշագրի աղոտ և հակասական դրույթները, մեր կարծիքով, պարզապես կոչված են չեզոքացնել այդ բացասական պատասխանի ազդեցությունը:

Ինչպես արդեն նշել ենք շատ սակավաթիվ հեղինակներ են Յեղասպանության մասին կոմվենցիան դիտում, որպես Հայոց ցեղասպանության իրագործման համար պատասխանատվության իրավական հիմք։ Մեր կարծիքով, Յեղասպանության մասին կոմվենցիան՝ որպես պայմանագիր, Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության իրավական հիմք դիտելը իրավաչափ չէ։ Սա ամենևին էլ չի նշանակում, որ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության այլ իրավական հիմքեր գոյություն չունեն։ Թուրքիային միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու հիմքերը Հայոց ցեղասպանության համար բազմազան են և բազմապիսի։ Նրանք ներառում են այդ հանցագործությունն իրագործելու ժամանակ գոյություն ունեցող սովորութային միջազգային-իրավական նորմերը, որոնք պատասխանատվություն էին նախատեսում ցեղասպանության (անվանենք այն այդպես, թե՛ ոչ) հանցակազմը կազմող արարքների իրագործման համար, ինչպես նաև բազմաթիվ միջազգային պայմանագրեր՝ սկսած 1878 թվականի Բեռլինի պայմանագրից (հ. 61, 62)։

Վերոհիշյալ վերլուծությունը որևիցե քեկում չի մտցնում հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակի մեջ՝ պահպանելով ձևավորված status quo-ն, այն է՝ Յեղասպանության մասին կոնվենցիան կիրառելի չէ Հայոց ցեղասպանության նկատմամբ (այն տեղի է ունեցել մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը), իսկ Հայոց ցեղասպանության մեջ առկա է ցեղասպանության հանցագործության՝ Կոնվենցիայով նախատեսված հանցակազմը (Աշխարհի պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման շարունակվող գործընթացը այլ եզրահանգման հնարավորություն արդեն իսկ չի տալիս), սակայն Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման համար կենսական նշանակություն ունեցող հարցը, այն է՝ թե պատժելի՞ է եղել ցեղասպանության հանցագործությունը Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ, շարունակում է մնալ անպատասխան։ Մեր կարծիքով, հենց այս հարցի վրա պետք է ուշադրություն դարձնեին ԹՀՀՀ հայկական կողմի անդամները՝ հայցելով Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին պատասխանել այն հարցին, թե «պատժելի՞ է եղել, արդյոք ցեղասպանության հանցագործությունը՝ այնպես ինչպես այն սահմանված է Յեղասպանության մասին կոնվենցիայում, Եվրասիական մարդասիրության XX դարի սկզբին»՝ նույնիսկ չկա-

պելով այդ հարցադրումը Հայոց ցեղասպանության փաստի հետ: Այս հարցի պարզաբանումը, մեր կարծիքով, ավելի շատ իրավաբանական դիվիդենտներ կբերեր հայկական կողմին՝ մեկընդմիջտ վերջակետ դնելով ցեղասպանության պատժելիության և դրա համար Թուրքիայի Հանրապետության պատասխանատվության վերաբերյալ հարցականներին, սակայն ԹՀՀՀ անդամները զնացել են այլ ճանապարհով, տալով Թուրքական պետությանը իրավաբանական առումով ամուլի, սակայն քաղաքականապես շատ հնչեղ մի փաստարկ՝ «Յեղասպանության կանխարգելում և դրա համար պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիան կիրառելի չէ Հայոց ցեղասպանության նկատմամբ:

Հանուն ճշմարտության, այնուամենայնիվ, պետք է նշենք, որ Վերլուծություն իրականացնելու գաղափարը, որպես այդպիսին, առաջադիմական գաղափար էր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն, ըստ էության, բուրք-հայկական կոմպրոմիսի արդյունք է: Ընդհանրապես Հայոց ցեղասպանության հետ կապված հարցերին պատասխան գտնելու համար անկախ մասնագիտական մարմիններին դիմելը, ըստ մեզ, հանդիսանում է այդ հարցերին վերջնական պատասխան գտնելու օպտիմալ տարբերակ:

Հուսով ենք, որ Թուրքիայի կառավարությունը ևս, զնալով ԹՀՀՀ օրինակով, կհամաձայնի Հայոց ցեղասպանության իրագործման վերաբերյալ վեճը հանձնել իրավասու միջազգային դատական կամ ոչ դատական մարմնին, որի որոշումները կկրեն իր համար պարտադիր բնույթ: Այդ մարմնի գործառնությունը, մեր կարծիքով, հաջողությամբ կարող է կատարել հենց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տես՝ օրինակ, Киракосян Дж. С., Симонян С. П. Документы французских архивов о геноциде армян. Ереван: (АН Арм. ССР ЦНИОН), 1985; Германские источники о геноциде армян. Сборник документов. Составители Степанян С., Багдасарян Н., Ереван, "Айастан", 1991 և այլն.
- ² Տես՝ օրինակ, Барсегов Ю. Г. Геноцид армян преступление по международному праву, Москва, 2000; Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида (О концепции члена "комиссии примирения" Гюндюз Актана), Москва, "Готика", 2002; Авакян А. Геноцид армян механизм принятия решения, "Ереван", 2000; Dadrian V. N. The Historical and Legal Interconnections Between the Armenian Genocide and the Jewish Holocaust: From Impunity to Retributive Justice. Yale Journal of International Law, 1998, vol. 23, No 2.
- ³ Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են Արգենտինայի Հանրապետությունը (Պառլամենտի 1985թ. ապրիլի 23-ի բանաձև), Ուրուգվայի Արևելյան Հանրապետությունը (Ազգային ժողովի 1985թ. ապրիլի 23-ի բանաձև), Կիպրոսի Հանրապետությունը (Պառլամենտի Ներկայացուցիչների պալատի 1975թ. ապրիլի 24-ի (36/1975), 1982թ. ապրիլի 25-ի (74/1982) և 1990թ. ապրիլի 19-ի (103/1990) բանաձևեր), Հունաստանի Հանրապետությունը (Պառլամենտի 1996թ. ապրիլի 25-ի (2397/1996) բանաձև), Լիբանանի Հանրապետությունը (Պառլամենտի 1997թ. մայիսի 3-ի բանաձև), Ռուսաստանի Դաշնությունը (Դաշնային ժողովի Պետական դումայի 1995թ. ապրիլի 14-ի որոշում), Բելգիայի Թագավորությունը (Պառլամենտի Սենատի 1996թ. մարտի 26-ի (1-736/3) բանաձև), և այլ

երկրներ, իսկ Ֆրանսիայի Հանրապետությունը ընդունել է օրենք «Հայոց ցեղասպանության ճանաչման մասին» 2001 հունվարի 18-ին:

⁴ Փաստաթուղթը օգտագործում է և՛ Վերլուծություն (Analysis), և՛ Հուշագիր (Memorandum) տերմինները:

⁵ Հուշագրի հեղինակները որդեգրել են Թուրք-Հայկական հաշտեցման հանձնաժողովի «Փոխըմբռնման հուշագրում» արտացոլված տերմինաբանությունն այդ Իրադարձությունները, այն է՝ Հայոց ցեղասպանությունը, բնորոշելու համար: Տես՝ LEGAL ANALYSIS PREPARED FOR THE INTERNATIONAL CENTER FOR TRANSITIONAL JUSTICE ON THE APPLICABILITY OF THE UNITED NATIONS CONVENTION ON THE PREVENTION AND PUNISHMENT OF THE CRIME OF GENOCIDE TO EVENTS WHICH OCCURRED DURING THE EARLY TWENTIETH CENTURY [hereinafter Analysis], p. 1, available at <http://www.armenian-genocide.com>

⁶ Analysis p. 1.

⁷ Ibid.

⁸ Ibid.

⁹ Ibid.

¹⁰ Ibid.

¹¹ Մեր կարծիքով, Հուշագրի հեղինակները նպատակ են հետապնդել մեկ անգամ ևս շեշտել Կոնվենցիայում նախատեսված հանցակազմի համընդհանրորեն ճանաչված լինելը:

¹² «1994թ. հունվարի 1-ից 1994թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Ռուսնդայի տարածքում Ցեղասպանության և միջազգային մարդասիրական իրավունքի այլ լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց և հարևան պետությունների տարածքում ցեղասպանության և այլ համանման խախտումների համար պատասխանատու Ռուսնդայի քաղաքացիների դատական հետապնդման համար միջազգային քրեական դատարանի կանոնադրություն» [հետայսու՝ «ՌՄԶԴ Կանոնադրություն»], հոդված 2, U. N. Doc. S/RES/955, Annex (1994), «1991թ-ից Նախկին Հարավսլավիայի տարածքում կատարված միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց դատական հետապնդման համար միջազգային քրեական դատարանի կանոնադրություն» [հետայսու՝ «ՆՀՄԶԴ Կանոնադրություն»], հոդված 4, U. N. Doc. S/25704, Annex:

¹³ «Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրություն» [հետայսու՝ «ՄԶԴ Կանոնադրություն»], հոդված 6, U. N. Doc. A/CONF. 183/9 (1998):

¹⁴ Analysis, p. 3.

¹⁵ ICJ, Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia-Herzegovina v. Yugoslavia), Preliminary Objections (July 11, 1996), available at <http://www.icjci.org/icjwww/ldocket/ibhy/ibhyjudgment/ibhyjudgment 19960711frame.htm>

¹⁶ Միջազգային պարնանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիա, հոդ. 28:

¹⁷ Տես, մասնավորապես՝ Int'l Ct. of Justice, Fisheries Jurisdiction (U. K. v. Ice.), Jurisdiction of the Court, 1973 I. C. J. 3, 8 (Feb. 2).

¹⁸ Analysis, p. 7.

¹⁹ Ibid.

²⁰ Միջազգային պարնանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիա, հոդ. 24:

²¹ Analysis, p. 8.

²² Ibid, p. 10.

²³ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1946 թվականի դեկտեմբերի 11-ին՝ իր առաջին նստաշրջանում, ընդունեց երկու բանաձև. 95/1 բանաձևը Նյուրնբերգի միջազ-

գային քրեական դատարանի կողմից ճանաչված միջազգային իրավունքի սկզբունքները հաստատելու մասին և 96/1 քանաձևը Յեղասպանության հանցագործությունը սահմանելու մասին: Վերջինում առաջին անգամ միազգային-իրավական ձևակերպում ստացավ ցեղասպանության հանցագործության հասկացությունը և նրա հիմնական տարրերը:

²⁴ Analysis, p. 10.

²⁵ ՄԸԴ-ի Նախադատաստական հանձնաժողովը ստեղծվել է ՄԸԴ-ի Կանոնադրության մեջ նախատեսված հանցագործությունների տարրերը մշակելու և Մասնակից պետությունների ասամբլեային ներկայացնելու համար: Ըստ ՄԸԴ-ի Կանոնադրության 9-րդ հոդվածի «հանցագործության տարրերը դատարանին օգնում են 6-րդ [ցեղասպանություն], 7-րդ [մարդկության դեմ ուղղված հանցագործություններ] և 8-րդ [պատերազմական հանցագործություններ] հոդվածների մեկնաբանման և կիրառման գործում: Այս տարրերը ընդունվում են Մասնակից պետությունների ասամբլեայի անդամների ձայների 2/3 մեծամասնությամբ»:

²⁶ Finalized Draft Text of the Elements of Crimes, Report of the Preparatory Commission for the International Criminal Court, Addendum, Part II, U. N. Doc. PCNICC/2000/1/Add.2 (2000), at 6.

²⁷ Analysis, pp.14-15.

²⁸ Ibid, p.14.

²⁹ Կոնվենցիոնալ նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում ցեղասպանության հանցագործության հանցակազմը միակն է, որի հասկացության մեջ՝ որպես հանցակազմի պարտադիր տարր, նախատեսված է «մտադրությունը»: Ավելի հանգամանալի տես՝ Барсегов Ю. Г. Геноцид армян преступление по международному праву, Москва, 2000, стр 99.

³⁰ Analysis, p.15.

³¹ Ibid, p.16.

³² 2001 թվականի հոկտեմբերի 9-ի դրությամբ «Յեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու» մասին ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի մասնակից էին 133 պետություն: Հայաստանի Հանրապետությունը միացել է Կոնվենցիային 1991 թվականի դեկտեմբերի 10-ին: Stu'Parties of Genocide Convention, available at <http://www.preventgenocide.org/law/gencon/parties-alpha.htm>

³³ Ambatielos Case (Greece v. U. K.), Preliminary Objections, 1952 I. C. J. 27, 40 (July 1).

³⁴ Stu' Барсегов Ю. Г. Геноцид армян преступление по международному праву, Москва, 2000, стр. 62; Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида (О концепции члена "комиссии примирения" Гюндюз Актана), Москва, "Готика", 2002, стр. 48; Dadrian V. N. Genocide as a problem of National and International Law.-The World War I Armenian Case and its Contemporary Legal Ramifications.Yale Journal of International Law. 1989, Band. 14, No 2, pp. 292; Менжинский В. И. Перед судом мирового сообщества. В кн. Геноцид! Под. ред. Галкина А., Москва, "Прогресс", 1985. стр. 181-182; Ромашкин П. С. Преступления против мира и человечества, Москва, "Наука", 1967, стр. 264.

³⁵ Toriguian Sh. The Armenian Question and International Law. La Verne, Ca, "ULV Press", 1988. pp. 33-34.

³⁶ 1945թ. հունիսի 26-ի «ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի» ստատուտի հոդ. 38-ի 1-ին կետի b ենթակետ:

³⁷ Յեղասպանության մասին կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքների մասին տես՝ ավելի հանգամանալի, Менжинский В. И. Перед судом мирового сообщества. В кн. Геноцид! Под. ред. Галкина А., Москва, "Прогресс"1985. стр.181-182.

- ³⁸ Թուրքիայի Հանրապետությունը միացել է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելման և դրա համար պատժելու մասին» կոնվենցիային 1950թ. հուլիսի 31-ին: *Shu' Torigvian Sh. The Armenian Question and International Law. La Verne, Ca, "ULV Press", 1988., p. 35; Genocide and Human Rights: A Global Anthology. Edited by J. N. Porter. Washington, "University Press of America", 1982. p. 140.*
- ³⁹ Աներաժեշտ ենք համարում ընդգծել, որ ԱԶԳ-ի Նախասպառաքսական հանձնաժողովը մշակել է ցեղասպանության հանցագործության հանցակազմի օրյել-տիվ կողմը կազմող յուրաքանչյուր ադարթի տարրերի ցանկերը, և այս տեսանկյունից անհասկանալի է, թե ի՞նչու Վերածության հեղինակները սահմանափակվել են միայն սպանության միջոցով ցեղասպանությանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության պարագայում ստանձնահատուկ տեղ է զբաղել տարահանումը սիրիական անսպառներ, այսինքն՝ դիտավորմամբ կյանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք միտված են այդ խմբի լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը (Ցեղասպանության մասին կոնվենցիայի հոդ. 2(c)):
- ⁴⁰ *Analysis, p. 17.*
- ⁴¹ Տես՝ Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից (1984-1987թ.թ.) Փաստաթղթեր, Հազմող և ներածության հեղինակ Բարսեղյան Լ.Ա., Երևան, 1999թ.:
- ⁴² Տպակոություն է ստեղծվում, որ սույն փաստաթղթի հեղինակները, բանաձևը կազմելիս, որոշ տեղերում մոռացության են մատնել միջազգային իրավունքի մի շարք դրույթներ, մասնավորապես՝ պետությունների իրավահաջորդության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի չկիրառման, միջազգային հանցագործություններ կատարելու համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ և այլն:
- ⁴³ *Int'l Ct. of Justice, Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion (May 28, 1951), 1951 I. C. J. 15, 23.*
- ⁴⁴ *Int'l Ct. of Justice, Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Yugoslavia), Preliminary Objections (July 11, 1996), 1996 I. C. J. 595.*
- ⁴⁵ *Travaux Preparatoires, p. 23 (Statement of Mr. Blanco).*
- ⁴⁶ *Ibid, p. 40 (Statement of Sir Hartley Shawcross).*
- ⁴⁷ *Ibid, p. 28 (Statement of Mr. Bustos Fierro).*
- ⁴⁸ *Int'l Ct. of Justice, Case Concerning Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Yugoslavia), Preliminary Objections (July 11, 1996), 1996 I.C.J. 595, Int'l Ct. of Justice, Reservations to the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion (May 28, 1951), 1951 I. C. J. 15, 23.*

Резюме

О правовом исследовании относительно геноцида армян, проведенном для Международного центра переходного правосудия
Владимир Маргарян

Самым значительным достижением работы Турецко-армянской комиссии примирения принято считать Правовое исследование по вопросу «Применимости Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него от 9 декабря 1948 года к событиям, имевшим место в начале 20 века», проведенное для Международного центра переходного правосудия по просьбе членов ТАКП и на основании подготовленного ими

Меморандума о взаимопонимании. Данное Исследование было призвано дать ответ на вопрос о том, применима ли Конвенция о предупреждении преступлений геноцида и наказании за него от 9 декабря 1948 года к Геноциду армян?

Статья посвящена анализу вышеупомянутого Исследования с точки зрения положений международного права, в ней представлены краткое содержание Исследования, его структура и основные положения. Наряду с бесспорным признанием прогрессивного значения данного и подобных правовых исследований, в статье подвергаются критике многие из ее положений. Подовная критика обусловлена игнорированием создателями Исследования некоторых положений международного права, акцентированием внимания лишь на отдельных элементах, связанных с применимостью Конвенции 1948 года к Геноциду армян, в частности заостренным вниманием к временному аспекту применимости Конвенции и, в первую очередь, двойственностью и неоднозначностью ее выводов.

Проведение правовых исследований подобного рода является еще одним доказательством того, что Геноцид армян все еще находится в плоскости международного права и не является просто историческим фактом.

Summary

On Legal Analysis Concerning
the Armenian Genocide Prepared for the
International Center for Transitional Justice
Vladimir Margaryan

The Legal Analysis on "Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events occurred during the Early Twentieth Century" prepared for the International Center for Transitional Justice on the base of the Memorandum of Understanding entered into by The Turkish Armenian Reconciliation Commission ("TARC") and presentations by members of TARC recognized as the most significant result of TARC activities. This Analysis aimed to answer the following question. May the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide be applicable to the Armenian Genocide?

The Article dedicated to the investigation of the mentioned Analysis in the light of Provisions of Public International Law. The paper describes the quintessence of the Analysis, its structure and basic provisions. Along with irrecusable recognition of progressive sense of this Analysis and similar legal researches, the Article criticizes various provisions of the Analysis. This criticism is conditioned with disregard by the Authors of the Analysis of several provisions of Public International Law, attraction on separate elements connected with the application of the Genocide Convention to the Armenian Genocide in particular emphasizing the temporal aspect of the Convention's applicability and in the first instance, with the ambiguity and duality of its conclusions.

The preparation of the similar legal analysis is the additional evidence of the fact that the Armenian Genocide is still the matter of Public International Law and International Relations but not a simple historical fact.